| ՔԱՂՎԱԾՔ «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ ***ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ*** №1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ | CONVERSE BANK | **EXTRACT FROM “CONVERSE BANK” CJSC *GENERAL ANNUAL* MEETING MINUTES №1** |
|---|---|---|

*ք. Երևան* *10-ը հունիսի, 2010թ.*

*2010թ. հունիսի 10-ին, ժամը 18:00-ին «Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերության գտնվելու վայրում՝ ՀՀ, ք. Երևան, Հանրապետության Հրապարակ, Վ. Սարգսյանի փողոց, 26/1 հասցեում տեղի ունեցավ «Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը (հետագայում՝ Ընդհանուր ժողով): Ժողովին մասնակցել են ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերը.*

- *«Ադվանսդ Գլոբալ Ինվեսթմենթս» ԷԼԷԼ-Սի՝ ի դեմս Ջուան Պաբլո Գեչիջյանի՝ 11714 ձայնի իրավունքով,*
- *Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ ի դեմս Արսեն սարկավագ Գամաղելյանի՝ 617 ձայնի իրավունքով:*

*Ժողովի մասին ծանուցված էին՝*

- *ՀՀ Կենտրոնական Բանկի նախագահը,*
- *Բանկի՝ հաշվետու տարվա արտաքին աուդիտ իրականացնող անձի ղեկավարը,*
- *«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Խորհրդի նախագահն ու անդամները,*
- *«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը և*

***Yerevan*** ***June 10, 2010***

*The General Annual Meeting of “Converse Bank” Closed Joint-Stock Company (hereinafter “the General Meeting”) was held on June 10, 2010 at 18:00 at “Converse Bank” Closed Joint-Stock Company: 26/1 Vazgen Sargsyan Street, Republic Square, Yerevan, RA. The meeting was attended by the following shareholders having the right to participate in General Meeting:*

- *Advanced Global Investments LLC, represented by Mr. Juan Pablo Gechidjian with the right of 11714 votes,*
- *The Armenian Saint Apostolic Church, represented by Arsen deacon Gamaghelyan, with the right of 617 votes.*

*The following persons were notified of the Meeting:*

- *Chairman of the RA Central Bank,*
- *The Manager of the entity conducting external audit of the Bank for the reporting year,*
- *“Converse Bank” CJSC Board Chairman and Members,*
- *Head and members of “Converse Bank” CJSC Internal Audit Department,*

*անդամները,*

- *«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Գործադիր տնօրենը,*
- *«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Գործադիր տնօրենի տեղակալ- Հաշվապահական հաշվառման վարչության պետ-գլխավոր հաշվապահը:*

- *"Converse Bank" CJSC Executive Director,*
- *"Converse Bank" CJSC Deputy Executive Director – Head of Accounting Department - Chief Accountant.*

*որոնցից Ժողովի նիստին ներկա էին՝*

- *ՀՀ ԿԲ լիազոր ներկայացուցիչները,*
- *Բանկի՝ հաշվետու տարվա արտաքին աուդիտ իրականացնող անձ «Գրանթ Թորնթոն Ամիօ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Արմեն Հովհաննիսյանը,*
- *«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Խորհրդի նախագահ Ջուան Պաբլո Գեչիջյանը,*
- *«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Խորհրդի անդամներ Արմեն Տեր-Տաճատյանը և Ադամ Տոնիկյանը (Տեր Թորգոմ վրդ.)*
- *«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավար Լ.Յորդանյանը,*
- *«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Գործադիր տնօրենի ժ/պ Ա. Կարախանյանը:*

*Of the above persons, the following attended the Meeting:*

- *Authorized representatives of the RA CB,*
- *Armen Hovhannisyan, representative of "Grant Thornton Amyot" LLC, Independent Auditor of the Bank for the reporting year,*
- *Juan Pablo Gechidjian, Board Chairman of "Converse Bank" CJSC,*
- *"Converse Bank" CJSC Board Members Armen Ter-Tachatyan and Adam Tonikyan (Father Torgom Rev.),*
- *L.Yordanyan, Head of Internal Audit Department of "Converse Bank" CJSC,*
- *A. Karakhanyan, Acting Executive Director of "Converse Bank" CJSC.*

*Հաշվի առնելով, որ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ տեղաբաշխված քվեարկող հասարակ (սովորական) բաժնետոմսերի ձայների գումարային քանակը կազմում է 12331 ձայն, իսկ*

*Whereas the total number of votes of placed common voting shares of "Converse Bank" Closed Joint-Stock Company is 12331 and the total number of the votes owned by the General Meeting*

| ՔԱՂՎԱԾՔ<br>«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ<br>***ԸՆԴՀԱՆՈՒՐ***<br>***ԺՈՂՈՎԻ*** №1<br>ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ | CONVERSE BANK | **EXTRACT FROM<br>"CONVERSE BANK"<br>CJSC *GENERAL*<br>*ANNUAL* MEETING<br>MINUTES №1** |
|---|---|---|

*Ընդհանուր ժողովին մասնակցող բաժնետերերին պատկանող ձայների գումարը հավասար է 12331 ձայնի՝ հետևաբար «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 77 հոդվածի համաձայն Ընդհանուր ժողովը համարվեց իրավասու և հայտարարվեց բացված:*

*participants is 12331, therefore pursuant to Article 77 of the RA Law "On Joint-Stock Companies" the General Meeting was considered competent and was declared open.*

*Ընդհանուր ժողովը նախագահում էր Ջուան Պաբլո Գեչիջյանը, իսկ ժողովի քարտուղարն էր «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Աշխատակազմի ղեկավար Լիլիթ Սարգսյանը:*

*Mr. Juan Pablo Gechidjian presided at the General Meeting and Ms. Lilit Sargsyan, Head of "Converse Bank" CJSC Administrative Staff, was the Secretary of the Meeting.*

*ՕՐԱԿԱՐԳ*

2. «Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերության 2009 թվականի ֆինան-սատնտեսական գործունեության արդյունքում ստացված շահույթների և կրած վնասների բաշխման մասին: Տարեկան շահութաբաժինների վճարման և տարեկան շահութաբաժինների չափի հաստատման մասին:

5. «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու վերաբերյալ:

***AGENDA***

2. On allocation of profits gained and losses incurred during the financial-economic activity of "Converse Bank" Closed Joint-Stock Company throughout 2009. On payment of annual dividends and approval of the amount thereof.

5. On approving the Charter of "Converse Bank" CJSC in new edition.

| ՔԱՂՎԱԾՔ «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ ***ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ*** №1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ | CONVERSE BANK | **EXTRACT FROM "CONVERSE BANK" CJSC *GENERAL ANNUAL* MEETING MINUTES №1** |
|---|---|---|

2-ՐԴ ՀԱՐՑԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Որոշեցին՝

1. 2010թ. ընթացքում Բանկի ֆոնդերին հատկացումներ չկատարել:
2. 2010թ. ընթացքում Բանկի բաժնետերերին շահութաբաժիններ չբաշխել:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| | |
|---|---|
| Կողմ՝ | 12331 ձայն |
| Դեմ՝ | 0 ձայն |
| Ձեռնպահ՝ | 0 ձայն |

**ON ISSUE 2**

**Resolved:**

1. Not make allowance to the Bank fund reserves during 2010.
2. Not pay dividends to the Bank's shareholders during 2010.
3. This resolution takes effect since the moment of being approved.

| | |
|---|---|
| **For:** | **12331 votes** |
| **Against:** | **0 votes** |
| **Abstained:** | **0 votes** |

5-ՐԴ ՀԱՐՑԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Զեկուցեց՝ Ջուան Պաբլո Գեչիդջյանը «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Կանոնադրության մեջ կատարված փոփոխությունների վերաբերյալ /կցվում է հավելված 2/:

Ջուան Պաբլո Գեչիդջյանը նշեց, որ հաշվի առնելով Բանկի նախատեսված երկարաժամկետ ծրագրերը և ՀՀ կենտրոնական

**ON ISSUE 5**

Heard: the report of Juan Pablo Gechidjian on the amendments to the Charter of "Converse Bank" CJSC /Annex 2/.

Mr. Juan Pablo Gechidjian also pointed out that taking into account the long-term programs of the Bank and Decision No. 54-N of the RA Central Bank dated March 19, 2010 on amendments made

բանկի 19.03.2010թ. թիվ 54-Ն որոշմամբ «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում կատարված փոփոխությունները, ստեղծված պարագայում հիմնավորեց Բանկի կապիտալի ավելացման նպատակահարմարությունը: Ջուան Պաբլո Գեչիդջյանը առաջարկեց Բանկի կանոնադրական կապիտալի համալրել նախորդ տարիների չբաշխված շահույթի հաշվին, ավելացնելով սովորական բաժնետոմսերի անվանական արժեքը, ինչպես նաև իրականացնել լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխում:

Այսպիսով Բանկի կանոնադրական կապիտալի համալրման նպատակով նախորդ տարիների չբաշխված շահույթի՝ 2 466 200 000 ՀՀ դրամի հաշվին բանկի սովորական բաժնետոմսերի անվանական արժեքը կմեծացվի: Ջուան Պաբլո Գեչիդջյանը առաջարկեց նաև Բանկի կանոնադրական կապիտալի համալրման նպատակով իրականացնել նաև 3869 հատ լրացուցիչ սովորական բաժնետոմսերի տեղաբաշխում, յուրաքանչյուրը 300 000 դրամ անվանական արժեքով: Ներկայիս բաժնետերերի փայաբաժինների 95/5 համամասնությունը պահպանելու նպատակով Ջուան Պաբլո Գեչիդջյանը առաջարկեց տեղաբաշխել թողարկվող սովորական բաժնետոմսերը հետևյալ կերպ՝

to Regulation 2 "Regulation of banking activities and principal economic standards of banking activities", substantiated the reasonability of replenishing the Bank's capital. Mr. Juan Pablo Gechidjian suggested replenishing the Bank's chartered capital on account of profit not distributed during preceding years, increasing the nominal value of ordinary shares, as well as allocating additional shares.

Thus, for replenishing the Bank's chartered capital, the nominal value of the Bank's ordinary shares will be increased at the expense of non-distributed profit of the previous years in the amount of AMD 2 466 200 000. Mr. Juan Pablo Gechidjian suggested also allocating additional 3869 ordinary shares, each with the nominal value of AMD 300 000, for the purpose of replenishing the Bank's chartered capital. In order to maintain the present 95/5 correlation of the shareholder's shares, Mr. Juan Pablo Gechidjian suggested allocating the new ordinary shares in the following manner:

- 3 676 հատ սովորական բաժնետոմս՝ «Ըդվանսդ Գլոբալ Ինվեսթմենթս» ՍՊԸ-ին
- 193 հատ սովորական բաժնետոմս՝ Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցուն:

- 3 676 nominal shares to "Advanced Global Investments" LLC;
- 193 ordinary shares to the Armenian Saint Apostolic Church.

Ջուան Պաբլո Գեչիղջյանը տեղեկացրեց, որ բաժնետերերը ծանուցվել են նոր տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքի իրականացման մասին: Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցին համաձայնություն է տվել 193 հատ բաժնետոմսի ձեռք բերմանը:

«Ըդվանսդ Գլոբալ Ինվեսթմենթս» ՍՊԸ-ին համաձայնություն է տվել իր նախապատվության իրավունքի լրիվ ծավալով իրականացմանը և 3 676 հատ բաժնետոմսի ձեռքբերմանը:

Mr. Juan Pablo Gechidjian mentioned that the shareholders had been notified about the preferential right for purchasing the new allocated shares. The Armenian Saint Apostolic Church has agreed to purchase 193 shares.

"Advanced Global Investments" LLC has agreed to realize its preferential right to the full extent and to purchase 3 676 shares.

Ջուան Պաբլո Գեչիղջյանը տեղեկացրեց, որ կանոնադրական կապիտալի համալրման արդյունքում անհրաժեշտ է փոփոխություններ կատարել կանոնադրությունում, ինչպես նաև փոփոխել կանոնադրության 9.4.4. կետը վարչության կազմում ընդգրկված անձանց մասով:

Mr. Juan Pablo Gechidjian also mentioned that in the result of replenishment of the chartered capital, it would be necessary to make amendments in the Charter, as well as to amend point 9.4.4 of the Charter in the part of the persons included in the composition of the Management Board.

Որոշեցին՝

**Resolved:**

| ՔԱՂՎԱԾՔ «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ ***ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ*** №1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ | CONVERSE BANK | **EXTRACT FROM "CONVERSE BANK" CJSC *GENERAL ANNUAL* MEETING MINUTES №1** |
|---|---|---|

1. Բանկի կանոնադրական կապիտալը ավելացնել սովորական բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացմամբ՝ սահմանելով մեկ բաժնետոմսի անվանական արժեքը 300 000 ՀՀ դրամ և Բանկի նախորդ տարիների չբաշխված շահույթի 2 466 200 000 ՀՀ դրամ գումարը ուղղել կանոնադրական կապիտալի համալրմանը՝ բաժնետերերի բաժնեմասնակցությանը համամասնորեն, որից 2 342 800 000 ՀՀ դրամը՝ «Ըդվանսդ Գլոբալ Ինվեսթմենթս» ԷԼԷԼՍԻ-ի կողմից, իսկ 123 400 000 ՀՀ դրամը՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու կողմից:

1. Replenish the chartered capital by means of increasing the nominal value of ordinary shares, setting the nominal value of one share to be AMD 300 000 and using the Bank's non-distributed profit of the previous years in the amount of AMD 2 466 200 000 for replenishment of the Bank's chartered capital, proportionate to the share portion of the shareholders, of which AMD 2 342 800 000 will be provided by "Advanced Global Investments" LLC and AMD 123 400 000 – by the Armenian Saint Apostolic Church.

2. Բանկի կանոնադրական կապիտալը ավելացնելու նպատակով թողարկել/տեղաբաշխել 3 869 (երեք հազար ութ հարյուր վաթսուն ինն) հատ սովորական բաժնետոմս, յուրաքանչյուրը՝ 300,000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով:

2. For the purpose of replenishing the Bank's chartered capital, issue/allocate 3 869 (three thousand eight hundred sixty nine) ordinary shares, each share with the nominal value of AMD 300,000 (three hundred thousand).

3. Ամփոփելով տեղաբաշխման արդյունքները՝ «Ըդվանսդ Գլոբալ Ինվեսթմենթս» ԷԼԷԼՍԻ-ի կողմից ձեռք են բերվել ՝ 3 676 հատ սովորական

3. To summarize the results of allocation: "Advanced Global Investments" LLC has purchased 3 676 ordinary shares, each share with the nominal value of AMD 300,000

բաժնետոմս, յուրաքանչյուրը՝ 300,000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով, 1 102 800 000 ՀՀ դրամ ընդհանուր գումարով, և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու կողմից՝ 193 հատ սովորական բաժնետոմս, յուրաքանչյուրը՝ 300,000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով, 57 900 000 ՀՀ դրամ ընդհանուր գումարով:

(three hundred thousand) for the total amount of AMD 1 102 800 000, and the Armenian Saint Apostolic Church has purchased 193 ordinary shares, each share with the nominal value of AMD 300,000 (three hundred thousand) for the total amount of AMD 57 900 000.

4. Արդյունքում Բանկի կանոնադրական կապիտալը սահմանել **4 860 033 300** ՀՀ դրամ, որը բաղկացած է **16 200** հատ սովորական բաժնետոմսերից 300,000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով և **333** հատ արտոնյալ բաժնետոմսերից, 100 (հարյուր) ՀՀ դրամ անվանական արժեքով:

4. In the result of allocation, the Bank's chartered capital will be AMD **4 860 033 300**, consisting of **16 200** ordinary shares with the nominal value of AMD 300,000 (three hundred thousand) and **333** preferential shares, with the nominal value of AMD 100 (one hundred).

5. Հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափը սահմանել 16200 (տասնվեց հազար երկու հարյուր) հատ սովորական բաժնետոմս, յուրաքանչյուրը 300 000 ՀՀ դրամ անվանական արժեքով և 333 (երեք հարյուր երեսուներեք) հատ արտոնյալ փոխարկելի բաժնետոմս, յուրաքանչյուրը 100 /հարյուր/ ՀՀ դրամ անվանական արժեքով:

5. The maximum value of the announced shares is 16200 (sixteen thousand two hundred) ordinary shares, each with the nominal value of AMD 300,000 and 333 (three hundred thirty three) preferential shares, with the nominal value of AMD 100 (one hundred).

Հաշվի առնելով բանկի կանոնադրական

կապիտալի ավելացումը՝ փոփոխել կանոնադրության 5.1. և 5.2 կետերը՝ կանոնադրական կապիտալի չափը սահմանելով 4,860,033,300.00 /չորս միլիարդ ութ հարյուր վաթսուն միլիոն երեսուներեք հազար երեք հարյուր/ ՀՀ դրամ, իսկ հայտարարված և տեղաբաշխված սովորական բաժնետոմսերի քանակը սահմանել 16200 /տասնվեց հազար երկու հարյուր/ հատ ՝ յուրաքանչյուրը 300,000.00 /երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ անվանական արժեքով: Փոփոխել նաև կանոնադրության 9.4.4. կետը վարչության կազմի վերաբերյալ:

Taking into account replenishment of the chartered capital, amend points 5.1 and 5.2 of the Charter, specifying that the total amount of the chartered capital is AMD 4,860,033,300.00 (four billion eight hundred sixty million thirty three thousand three hundred) and the quantity of ordinary shares is 16200 (sixteen thousand two hundred), each with the nominal value of 300,000.00 (three hundred thousand). Amend also point 9.4.4 of the Charter, in the part of composition of the Management Board.

6. Հաստատել «Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերության Կանոնադրության մեջ կատարված փոփոխությունները և հաստատել Կանոնադրությունը նոր խմբագրությամբ /կցվում է հավելված 2/:

6. Approve the amendments to the Charter of "Converse Bank" Closed Joint-Stock Company and approve the new edition of the Charter /Annex 2/.

7. «Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերության Գործադիր տնօրենի ժ/պ Ա.Կարախանյանին՝

ներկայացնել սույն որոշմամբ հաստատված Կանոնադրությունը ՀՀ Կենտրոնական բանկ գրանցման համար:

7. To A. Karakhanyan, "Converse Bank" CJSC Acting Executive Director:

submit the Charter approved by the resolution hereof for registration in the Central Bank of RA.

| ՔԱՂՎԱԾՔ «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ ***ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ*** №1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ | CONVERSE BANK | EXTRACT FROM "CONVERSE BANK" CJSC ***GENERAL ANNUAL*** MEETING MINUTES №1 |
| --- | --- | --- |

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

8. This resolution takes effect since the moment of being approved.

| | |
| --- | --- |
| Կողմ՝ | 12331 ձայն |
| Դեմ՝ | 0 ձայն |
| Ձեռնպահ՝ | 0 ձայն |

| | |
| --- | --- |
| **For:** | **12331 votes** |
| **Against:** | **0 votes** |
| **Abstained:** | **0 votes** |

ՔԱՂՎԱԾՔՆ ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է
**EXTRACT IS TRUE TO THE ORIGINAL**

ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ՝
ՏԻԳՐԱՆ ԴԱՎԹՅԱՆ

EXECUTIVE DIRECTOR
TIGRAN DAVTYAN